


Հ Օ Ս Ե

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵՔՆՊՅՈՍ

Տարեկան դրոշմ 30

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Տարեկան գրանց 10

Փաստագրի քաղաքացիական փոփոխության վերաբերյալ գրեմ պիտի բլլան.

Գրաստանի անվանումը ԵՂԻՔԻ ՓՈՐՈՍԵԱՆ

Ձի հրատարակումը ձեռագիրները ես չեմ ստանում:

ԱՐՁԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

Քաղաքացիական պատերազմի համաձայնագրի կնքումից հետո Եգիպտոսում կատարվող փոփոխությունները և նրանց հետևանքները:

Թի. ԱՐՇԱԼՈՍՍԻ և Թի. ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերյալ Եգիպտոսի խնդրոց հանդես գալիս Եգիպտոսի կառավարության հասցեով քննարկում և քննադատում են:

ՎՃՌՈՒ ԳՐԱԿԱՆՆԵՐ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶԱՐԲ ՕՐԵՐԸ

Յոգում ազգային ուղղակի պատերազմի օգտին

ՀԱՏԸ 20 ՓՄԱԿ ՈՂՁ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

ՎԵՐՁՈՒՆ ՎԵՑ ՏԱՐՈՒԱՆ ԾՐԱՍՆԻՆ 1903 — 1908

Ա. Եգիպտոսի Մասնաշրջանի Բ. Միջին Եգիպտոսի Գ. Անվանումը Դ. Կրթական հաստատություններ և Բարեգործական ընկերություններ Ե. Ազգային Առաջնորդարանի Զ. Վերջաբան:

Կրթական հաստատություններ և Բարեգործական ընկերություններ

Երբեք եղած չէ որ Եգիպտոսի հայրենիքի մասին լինի որևէ մեկի մտածումը, կամ թե առհասարակ չէր, շատ կարճատև եղած է ատենց համեմատապես փայլուն շրջանները:

Այս քան տարիներ է ի վեր տեղական հայ թերթերու առաջնորդները և հոն երկրորդ զանազան թղթակցություններից նայելով՝ ըլլալ Ազգային Գործունեության վարժարանը ըլլալ Գաղտնի Գաղտնիները ունեցած չէ իր Լուսավորչական Ժրգիթը:

Մինչդեռ ուրիշ տեղեր յաջող ծրագիրներ գրեթե անգործադրելի կը մնան զբաղի նուազագույն հետևանքով. հոս, ատոր հակառակ է, որտեղ չէ որ կը պակաս, այլ գործունե, գիտակից և ձեռներեց ձեռքեր, Անցեալին մէջ Գաղտնիները շուրջ յուրեւոր խնդիրներ անպակաս եղած են. հոգաբարձութիւններ իրարու յաջորդած են...

Իրենց ծրագիրներով միասին, ատենք փորձած են կարգ մը բարեփոխումներ մտնել, բայց չեն գիտեր ինչու և ինչպէս, բարձրէն միշտ զլացուած է իրենց գործելու հարկ եղած ազատութիւնը և իրենց ծրագիրները մնացած են անգործադրելի, մեռեալ տառ:

Իսկապէս որ թիւն մը միայն կը լինի թարգմանի:

Եթէ մէկ կողմանէ եկող ու գացող այդ հոգաբարձութիւններուն գծուած չէ գործելու որոշ և մէկին շրջանակ մը, եթէ թոյլատրուած չէ անոնց որպէսզի անոնք իրենց անձնական պատասխանատուութեանը ներքեւ ներմուծեն հարկ տեսած բարեփոխումները՝ առանց վերին իշխանութեան զիմելու, գէթ միւս կողմանէ Գաղտնիներու ժողովը խորհած չէ այն ձեւք առնուելիք գէթ տարրական միջոցներուն վերջ մը գնելու համար իրերու անկերպարան վիճակին, որով դժբաղդարար նոյն statu quo-ն տիրած է. ուզուած չէ երբեք արմատական դարձան մը ընել. առհարգ է ըսելը թէ՛ այս բոլորին մէջ տուժողը տղայքը են:

Սերախաթի Ե սակայն հոս արձանագրելով թէ՛ ժամանակէ մը ի վեր, վերջին հոգաբարձութեան օրով, ժողովուրդի տրտունջները նուազած կերակին:

Քանի որ հոս կը թվական հաստատութեանց վրայ կը խօսուի, անցողակի դիտողութիւն մ'ալ ընեմ. 1905 Սեպտ. 1 ին Պ. Յ. Սեթեանի տեղ տեղոյս Գաղտնի վարժարանի տեսչութեանը կոչուելու Պ. Վահան Բիրքեանը, որը Կիպրոսէն եկած էր... զբաղանք ունենալով տեղոյն Որբանոցին վերջի կանոնադրերը:

Ձեռք ուղեր զբաղել Պրն. Բիրքեանի տեսչութեանը միջոցին թեր ու գէթ գրուածներովը, չեմ ուզեր ծանրանալ թէ ինչպէս Պրն. Բիրքեանի գործունեութիւնը սկսաւ (Լուսաբերի) հրատարակութեամբ, և յետոյ այդ գործունեութիւնը՝ որ դադար առնել չէր գիտեր՝ ուսումնասիրելու հասաւ Ազգային վարժարանը, (1) միայն կուզեմ հոս ի վեր հանել սկիզբունքի խնդիր մը՝ և մեր ազգային մարմինները լաւ կ'ընեն եթէ միշտ աչքի առաջ ունենան և որ հետեւեալն է. Պրն. Բիրքեան:

(1) Մանօթութիւն մը. - Բիրքեանի վարժարան ընդունուած օրերը դաշնակցականներու - ո՛չ Դաշնակցութեան - կողմէ կուզուէր Տես:

Տեսուչ ըլլալէ առաջ՝ նոյն վարժարանին հոգաբարձութեան անդամըն էր. արդ սկզբաւր շատ հակառակ բան մ'է ասի. հոգաբարձու մը որ տեսչութեան պաշտօնին աչք կը անկէ, ո՛ր է հոգաբարձուի և իր վարչակալի իրաւասութեանը ներքեւ գտնուող պաշտօնին միջև կայ անպայմանօրէն անհաշտութիւն մը. և ստուգելու ինչ վստահութիւն կրնայ ներշնչել հոգաբարձուի մը տեղեկագիրը քանի որ հասարակութիւնը միշտ տարակուսանք մը պիտի ունենայ իր անշահախնդրութեանը մասին. և ասկից զատ հոգաբարձութեան պաշտօն մը կամուրջ մը ներկայտուելու չէ ենթակային պաշտօնին առաջնորդող:

Ասկից առաջ Գաղտնի վարժարանի գէթ եղած դժգոհութիւնները երկու տեսակ էին, մին ուսումնական մակարդակին գէթ՝ իրրեւ շատ աննախանձելի, և երկրորդը՝ չէնքին ու տեղոյն գէթ. վարժարանը կառուցուած էր Տարս-էլ-Կիւնէնայի թաղը ասկից կէս դար առաջ, 1854 ին. այդ թաղը այն ժամանակները կեդրոնական վայր մը և կարեւոր ալ թաղ մը եղած է և Ազգային Առաջնորդարանի և Եկեղեցւոյն ալ մօտ, ըսել է այն ժամանակուան համար ամենէն նպատակաւարմարը, և ու է կերպով ներքին չէ բարեբարին՝ ազա Կարապետ Գաղտնի ամենաթեթեւ մեղադրութեան մը ընել հոն կառուցած ըլլալ:

Հուրիւ հրաւիրել Տիար Յակոբ Աստուրեանը, Երբեմն Պողոտեան վարժարանի տեսուչը. իսկ այժմ Պաշտօնեայ Մանթաշեանց Գաղտնի ճիւղին մէջ. Ստորագրելոյս եղած առաջարկի մը վրայ, Տ. Ա. Հանրմեանի կողմէ, համամտութեան ըստօրադրութիւն ալ տուի: Սակայն Պ. Բիրքեան յաջողելով իւրաքանչիւր վստահութիւն Պողոտեան բաշայի շրջանակները, կրցաւ տեսչութիւնը ձեռք անցնել և իր ձեռքը գտնուած միջոցներուն շնորհիւ մինչև ոճրագործութիւններ քաջալերելու ալ ելլել... մե՛ղք...

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

Լուսն համար շէնքը. Բայց աղկից ի վեր քաղաքը զգալի փոփոխութիւններ կրած էր, և ինչ որ այն ատենները յարմարօք չէր նկատուէր, ընդհակառակը ներկայ պէտքերուն չ'էր համապատասխաներ, և ասկից զատ՝ թողունք չէնքին զիրքը ու տեղը շինուած ըն ալ զգալի կերպով կրած էր ժամանակին անխուսափելի ազդեցութիւնը, և ալ ու ձախ կըրուներ ունէր:

Խորհելով թէ եթէ վարժարանին ուսումնական մակարդակին լաւացումը և բարձրացումը ազգային վարիչ մարմիններուն համար կնճատ էր՝ գէթ կարող էին չէնքին մտքը լաւացնել. Ահա թէ ինչպէս ազգային վարժարանին տեղ նոր շէնք մը կառուցանելու համար Եգիպտոսի Առաջնորդը կոչ մը հրատարակեց 20 Մարտ 1904 թուականաւ, այս կոչով կ'իմացնէր Հանգանակիչ Մասնախումբ մը կազմուած ըլլալը և ժողովուրդին հրաւեր կը կարգար հանգանակութեան մասնակցելու. այս հանգանակութեան արդէն Պողոտեան նուազար իր որդւոյն ամուսնութեանը առթիւ նոյն տարւոյ Փետրուարին հազար սակի նուիրած էր:

Իրամահտաբ Յանձնաժողովը հազու կը կարողանայ շորս հազար սակոյ շափ գումար մը հաւաքել, գոյացած այս գումարը անբաւական ըլլալուն կ'որոշուի առ յատկացնել մանկապարտեզի շինութեանը. գուրով երկսեռ վարժարանին շինութեանը, ազգային պաշտօնական մարմիններէն պատուիրակութեան մը Պողոտեան նուազարի մօտ ըրած գիմուսին վրայ, այս վերջինը կը ձեռնարկէ վարժարանին շինութեանը. եւ արհեստական և առեւտրական վարժարանի մը շինութեան արդէն յատկացուած մէկ միլիոն ֆրանքի գումարին մէկ մասը կը յատկացնէ Ազգ. վարժարանին, մնացեալ գումարովը հաստատելով Եգիպտոսի կամ Երոսպոլի վարժարանաց մէջ բարձրագոյն ուսման հետեւող հայ ուսանողաց թոշակներ:

1906 Մարտ 4ին Կիրակի օրը կը կատարուի Պաւլաքի այս ազգային նոր վարժարանին հիմնարկէրը. և յաջորդ տարին, 1907 Յունիս 11-

ին ալ կը կատարուի բացումը : Ահա այսպէսով վերջ կը գտնեն Գալըստեան շէնքին շուրջ եղած այնքան իրաւացի դժգոհութիւնները :

(Շարունակելի)

ՅԱՐ . Լ . Ս . ՇԱՄԼԵԱՆ

31 Դեկ . 1908

### ՀԱՆՊԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՅ

Գ . ՅՈՒՑՍԿ

Գումար Ա . Բ . Յանկի Դ . Ո . 103007, 50

Տիրաբ. Հ . Փափազեան	40
Ի . Տէմիրճեան	
(ատամնաբոյժ)	100
Կարօ Պալեան	500
Արթին Հալաճեան	150
Սարգիս Մարգարեան	
(Պէնի Մէզար)	500
Յակոբ Կարապետեան	
(Պէնի Մէզար)	50
Յարութիւն Մարգարեան	
(Պէնի Մէզար)	50
Յովսէփ Բէլլէճեան	
(Պէնի Մէզար)	20
Օհանէս Սըննեան	
(Պէնի Մէզար)	10
Վ . Սապա բաշա	500
Սեդրաք Դաւիթեան	400
Մկրտիչ Մ . Վ . Աղանունի	292, 50
Տօք . Շամլեան	100
Միհրան Գասապեան	50
Չամբէրժէնեան	20
Չ . Թուրեանց	30
Տ . Չօճրապեան	100
Գ . Թիւրլէնտեան	20
Վ . Պարճանքեան	50
Ն . Բ . Բրէնս Հիւսէին	
բաշա Գամէլ	5000
Տ . Կիւրեանեան	40
Մարկոս Ահարոն	50

Գումար շրջ . ողջ . 111080

Գահիրէ 31 Յուն . 1909

Մ . ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

### ՈՃՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ

Ռուսահայ վիպագիր-բանաստեղծ

ՄՈՒՐՈՅԱՆԸ

որ ճեպակ մը ունի զոն կ'ըլլայ .

Վերջերս՝ հայ թերթերէ ու մանք, որոնք առանձնաշնորհ ունին պատմութիւնը իրեզմութիւնը, կամ ստիպուած են միմեանց վրայ կազապարուած ձևով մը իրերը ներկայացնելու, առանց ճշմարտութիւնը փնտռելու հետամուտ ըլլալու, Կոկորդիլոսի արցունքներով ողորուած աչօք՝ ծանուցին Գրիգոր Տէր Յովհաննէսեանի (Մաւրացան) մահը՝ որ մեղմեցնուած համար սովորական դարձած եղբունադրժութեան մը հետեանքն է եղեր, (Տե՛ս Արշալոյսի նախորդ թիւը) իսկ զայն ծանուցանող թերթերը միամտաբար կամ գիտակցաբար մեղմակիցը եղան նմանը քիչ տեսնուած ոճերի մը :

Ստեպ օխալ է ընդունիլ և անկեղծօրէն հաւատալ թէ՛ ամէն մահեր՝ թերթերու միջոցաւ մեզի ծանուցուած պայմաններուն և պարագաներուն մէջ տեղի ունեցած են :

Գոնէ չափազանց միամիտ չի համարուելու համար՝ քիչ մը՝ ու եթէ կուզէք շատ մը պատկանոտ ըլլալու ենք այդ մասին : Մեծ ազգերու քաղաքականութիւնը և ճակատագիրը յաջողապէս վարող զուանագիտութիւնը պատկան էին ծրնած է . . .

Բայց մենք սահմանակ չըլլանք մը մէջ ամբողջութեամբ : Լաւ և յաջողակ ուսուցիչ մը, զոր օրինակ՝ աշխարհագրութեան դասը՝ աշակերտաց գտնուած դասարանին չորս պատերէն կսկսի աւանդել, հետզհետէ ընդարձակելով : Մենք ալ այդ մեթոտիկ հետեւինք, մեր օրինակները տեսնելի և շջափելի իրողութիւններէն առնելով :

Այսպէս ուրեմն, Այսօր կը լսէք կամ թերթերու միջոցաւ կը ծանուցուի ընթերցողաց թէ՛ այսինչը անձնասպան եղած է իր Ռէմէի սենեակին մէջ, ուր օգտակարութեան համար ժամանակէ մը ի վեր կը մընար :

Այդ ըրջախոհօրէն տրուած լուրին հակառակն ալ մտածենք թէ՛ անձնասպան ըլլալէ զատ, դեռ ուրիշ ինչ միջոցներով կրնայ այդ մահը առաջ եկած ըլլալ . . . Չէ՛ կարելի որ օրինակի համար՝ ուրիշներ սպաննած և անհետացած ըլլան, ու այդ ոճիւրը քննելու պաշտօն ունեցողներն ալ՝ արդէն կաշառուած մէկալներէն, ոճիւրը անձնասպանութեան ձևին տակ ներկայացուցած ըլլան մեզի . . . հասարակ մահկանացուներու :

Բ. վաղը կարելի է որ լսէք թէ՛ օրինակի համար, Աղեքսանդրիոյ մէջ երկու կարևոր դէմքեր իրարու ետեւէ յանկարծամահ եղած են՝ մահկանացուներ ենք. կ'ըլլայ ես՝ մէկէն ի մէկ մի՛ հաւատաք . ուրիշ պատճառներ ալ կրնան գոյութիւն ունեցած ըլլալ . . .

Գ. Միև օրը՝ կարելի է որ լսէք թէ՛ Ամերիկայի մէջ՝ որովհետեւ շատ մը նորութիւններ շատ անգամ Ամերիկայէն կուգան մեզի Խարբերդի Պղծչնցիներուն առատութեանը պատճառաւ-ամբողջ մը իր կիներ և տունին գանուղները դնդակներէ անցնելէն յետոյ, հատիկ մ'ալ իր ուղեղին ուղղած և անձնասպան եղած է . . .

Եւստով մի՛ հաւատաք, կ'ազաչեմ, քիչ մը թեւադրուեցէք որ՝ այդպիսի մահ մը կրնայ ոճրագործ ձեռքերու ալ օժանդակութիւնը վայելել . չէ՛ կարելի . . .

Դ. Աւելի դժբաղդ օր մը, կըրնայ ըստիւլ ձեզի թէ՛ այն ինչը՝ կիներու հետամուտ ըլլալուն համար, այդ անախիւստութիւնը կրնայ վրայ հասնելով սպաննած են զայն : Այսպիսի ոճրագործ լուրի մը երկու տու վարն ալ անուշա սիրտի կարգաք թէ՛ ոճիւրին զոյժը՝ 2000 հատիկ ալ ճաղէր ունի եղեր թղթապա-

նակին մէջ : Այս ձախորդ պարագային ալ կրնայ մտածել անտարակոյս որ՝ ատիկայ խղճմտեմն ազգուած ոչոքայի մը արդիւնքը կրնայ եղած ըլլալ, ո'հ է տակը ծակ, -բայց յաւիտենապէս ծակ մնալու գատապարտուած-ազատարար սնտուկի մը գատարկութեան «նոր զարկ մը» (Յ. Պարոնեանի բացատրութիւնը) տրուելու համար եղած է . . .

Եւ ուրիշ աւելի ամպամած ու սխուր օր մը, ի մէջ այլոց՝ կըրնաք լսել թէ՛ այսինչը՝ զոր օրինակ Նիլոյէ Թորոսեանը՝ խեղճի եկած է կամ բերել ուղղած են . . . (\*) :

Բայց ամէն պարագայի մէջ, Առաջինին այսինչն ինչքին է եկեր : Ինչ բացարձակապէս մի՛ հաւատաք . իսկ երկրորդին, թէ՛ «բերել ուղղած են . . . տարակոյսէ զերծ մնացէք թէ՛ այս հայեվար ոճրագործութեանց քրճակին մէջ, կարելի չէ՛ որ Վ.Ս.Պ.Պ.Տ ձեռք մը-զոր օրինակ թունաւորելով-նիլոյէ Թորոսեանին խեղճին տկարութիւն բերել ուղղուած ըլլայ, կամ պարզապէս զայն ալ անհետացնելու դիտաւորութեամբ տեսակ մը որդալթներ . . . Լարուած ըլլան անոր գէմ, ու յետոյ ի մեծ դժբաղդութիւն այսպէս ընել մտածողներուն, իրենց խեղճին կտորած պատկը մէջ տեղ գայ արդարութեան ուժով . . .

Դեռ շատ մը բաներ կարելի է թուել նմանաձև, սակայն հատ մ'ալ՝ ու վերջ գնենք, մեր նիւթէն շատ չ'չեղելու համար :

Չ. Օրին մէկը, եթէ կուզէ այդ օրը այս վերջին օրերը թող եղած ըլլան, եթէ լսէք կամ կարդար որ՝ Բիրամիտներու լուսանկարիչը, Ալբուարդի Տօղէն՝ մէկը գնդակահարած է դերադրողուած վայրկեանի մը մէջ, հողեւաններու պէս հաւատացէք որ՝ այդ վայրագ ձեռնարկին գիտակցաբար մղողներ եղած են այդ դժբաղդ մարդը . . .

Ինծի հետ դուք ալ համաձայն կրնաք ըլլալ թէ՛ մարդասպանութիւնը միմիայն գննքով, ատըրճանակով դաշնով չէ՛ որ կ'ըլլայ մարդ սպաննելու միջոցները շատ ու շատ են, և այս ամէն բաները շատ անգամներ իբր «արկածներ» կը ներկայացնեն մեզի, ու մենք ալ բարեմտօրէն հաւատ կընծայինք : Դիւրահաւան ըլլալու չէ սակայն այսպիսի պարագաներու ներկայացած ատեն : Իրականութեան մէջ և կարելիութիւնները յաճախ լաւ առաջնորդողներ եղած են ոճիւրներ երևան հանելու համար :

(\*) Ծանօթ . Խմբ . - Եթէ չէք հաւատար, շիփ-չիտակ Պէնի Սուրէն վազեցէք, ու հարցուցէք Ազատանի Առաջնորդին !!!, Տէրատէրներուն, Դիւանապետ Ազա Նազարէթին, մէկալներուն, Առաջնորդարանի պատերուն, անկէ յետոյ առանց ժամանակ կորսնցնելու Պապ-էլ-հատիտ ալ գացէք Ատոմ Առլանեանին, Ապրիլ՝ Մարտիրոս Արևանին . «Լուսարբ» ի վարիչ Տր . Քէչէճեանին . Արթին չօրպաճի ձեպէճեանի, յետոյ ասոնց անստիպողք սարդալոյսներուն . . .

Եթէ քիչ մը այս ուղղութեամբ մտածենք - մահերու առատութիւնը և դժբաղդութիւններու հիւսկէնները պիտի կրնանք փնտռել մարդկութեան բարոյական խաթարման և գատաղութեան պակասին, օրինակացութեանը, այլասերումին, ոճրագործ պաշտօններուն և կամ գէպի գազանաբարոյութիւն տածած հակամտերուն մէջ : (Մնացեալը յաջորդով)

### Ա.Ք.Գ.Ա.Յ.Ի.Ն

ՍՈՒՏ ԵՆ  
Առկէ անալ գրած էինք թէ՛ Հոգեւորայ Տէր Ղեւոնդ Եգիսկայոս Շիշմանեանի Գոլէն նոտի մը գրելով եղիպտոսի ստալնորդին ինչորձ էր իր եղբոր Իրատունքները պաշտպանել, պաշտպանելով միանգամայն Տ. Ն. Թորոսեանի իրատունքները : Օրինակ Շիշմանեանի միեւնոյն ատեն փոխանորդ նշանակած էր Արմենակ Էֆէնտի Աստուածատուրեանը, որ մէկ երկու ամիս անալ Առաջնորդարանի անցուղաբարձուն վերաքննութիւնը կատարելէ - բնականաբար վճարուած փոխարէն - եւ իր տեղեկագիրը մատուցանելէ յետոյ Պօլիս մեկնած էր :

Արմենակ Էֆ . Աստուածատուրեան Եգիպտոս վերադարձած է այժմ, իրեն հետ ունեւնալով փոխանորդագրերու ցոյց մին յանձնած է արդէն Տիրոս Թորոսեանի :

Յետաձգելով նկատողութեան առնել Ա. Աստուածատուրեանի փոխանորդագրերուն զօրութիւնը եւ կարողութիւնը, մենք հետեւելով մատուցուած փոխանորդագրի իմաստին, փութանք յայտարարել թէ՛ Սուտ է խօսած եւ գերած Ազգային Առաջնորդարանը, երբ ըսած է թէ՛ իրենք պատրաստ են լսել Տիրոս Եղիշ Թորոսեանի զոյգերը լսելու, սակայն այս վերջինն է որ կը ձգձգէ եւ չուզէր ստանալ դանոնք :

Կը կրկնենք թէ՛ սուտ կը խօսի ու կը գրէ Ազգ . Առաջնորդարանը պաշտօնապէս . . .

Առաջնորդարանը կամ լաւ եւս է ըսել, Առաջնորդը, փոխանորդը, Նազարէթը եւ Գողաք, ժողովէն մէկ երկու քննիչ, գիտնալով եւ հաստատելով մանաւանդ որ Տ. Ն. Թորոսեանի գոյքերուն մէջ գողութիւններ տեղի ունեցած են, եւ այս թերեւս իրենց համարժեատութեամբ, 1907 Յունիսին սկսեալ զանազան պատուակներով գոյքերու յանձնումը ձգձգել յետոյ, ուր ուրիշն ալ միտեն յետոյ՝ անմի մը կամք ըրած են յանձնել. հետեւելով պայմանը գնելով թէ՛ Տ. Եղիշ Թորոսեան, նախ քան իր գոյքերը ստանալը, պէտք է որ ստորագրէ թէ՛ «Ինք իր ԲՈՒՈՐ գոյքերը ստացած է իրենցմէ . եւ թէ՛ Առաջնորդարանը պատասխանատու չէ ԲՈՒՈՐ ԵՂՄԵՆԻՍԻՆ Եւ վնասներուն . . .

Այս կարգի անիբու. եւ յիմարական անաջարկ մը մեր Առաջնորդարանը միայն կրնայ հեղինակել աշխարհի վրայ : Ետտ բնական եւ ճշգրիտ է որ՝ Տ. Թորոսեան այսպիսի անիբու պայման մը ու եւ ճշուածի ներքեւ եւ ո'հ է զընով ստորագրել չ'պիտի ուզեր, եթէ իր մնացեալ գոյքերն ալ կորուստի մատուցուին, ինչպէս արդէն անոնց մէկ մասը Առաջնորդարանի համատեղութեամբ եւ գիտակցութեամբ գողցուած է եւ Առաջնորդարանի մէջ խեղճ ու կրակ եւ խարդախուած զուղակը եւ կարգ մը ուրիշ նոտիներ եւ վատերթիքեր կ'ապացուցանեն զայս : Հարկ չ'կայ այս նկատմամբ գոյու-

ՃԱՄԱՐԳ

Արագընթաց շոգեկախք բացառ իր քեռեր ,  
Զարկառ զանգակը՝ զստեղծեցաւ հետո զաշտեր ,  
Մնացին սաղին թեկ թեկ սիրահար արտեր ,  
Նագիկ լուսնոյ շայ տը իր երգը հիւսեր :

« Ծաղկապսակս մայր Հայաստան  
Հրամեշտ աւին զանկերոյ ցիրուցան  
Ճամբորդ , զարկառ ծոցեղ մեկնեցան ,  
Տարագիտ հետուն , ո՛հ , առանձնացան ,  
Բայց երբ հասնի ժամանակ եւ զարուն ,  
Կ'զգան անոնք՝ ունին սիրս եւ որուն  
Ուժով՝ կը յիշեն իրենց հայրենի տուն ,  
Ճամբորդ տարագիր , ո՛ր է քո սիրտուն :  
Մտածե՛ անգամ մը թե՛ հոն հետո ե՛րբ եր ,  
Հնեցը զանգակը անկեցի՞ր ու շոգին սուրի ,  
Վայրաշարժ եր ան , հոն հետուն զաշտեր ,  
Ծաղկեր սիրուն կտր կտր գոցիկն արտեր : »

Այժմ այ բանայ քեռեր շոգեկախք կոր՝  
Զարկե զանգը ու թե՛ հոն՝ ուր կայ կոր օր ,  
Այնքեղ սիրս մը զողտեսար , եւ շար մը ողոր  
Տանի միացնել հողին , ուր կապասեկ քեզ քոյր :  
Ա . Մ . ՀԱՃԻԹԱՆ

Թիւն ունեցած վաւերաթուղթերը ժա-  
մանակէն կանտա հրատարակութեան  
տալ . բայց բաւական է կը կարծենք  
յայտարարել թէ՛ Առաջնորդարանը եթէ  
այդ գործերը օրինակէս յանձնել կու-  
զիր . ինչո՞ւ . Տ . Տ . Ա . Պաշտանի , Մա-  
կար Արվաղեանի , Երուանդ Տէմիրճեա-  
նի , Օ . Թումանեանի , Կ . Պէրպէրեա-  
նի եւ Գ . Փոփազեանի ազատագրեալ  
նամակին չպատասխանեց նոյն իսկ , ո-  
րոնք կուզէին լոկ Առաջնորդարանի կող-  
մէ պատգամաւ օրոթեան մը գրկուելը , որ-  
պէսզի իրենց հետ գոյքերուն համար նոր  
բայց օրինաւոր՝ զուգակազմութիւն մը  
պատրաստուելով անոնք իր բուն տիրոջ  
Տ . Տ . Թորոսեանի յանձնուէր :

Ամօթ է Առաջնորդարանցիներ , ա-  
մօթ է կ'ըսենք , « ինչ ոչ մի մար-  
դեր անուանուածները եւ երեսներուն  
վրայ քաշուածները » թերեւս ձեռք  
չառ աւելի խղճամբով էին ըսելու վրայ  
կը մտածենք . Գոնէ պաշտօնական նա-  
մակներով սուտ մի՛ խօսիք ուրիշներուն  
միտքը սղտորելու համար , անամօթու-  
թիւնը անգամ չափ ունի եւ դուք այդ  
չափէն ալ անցած էք՝ սերբը եւ գողու-  
թիւնը միշտեւ այս ստորինն քաջուրե-  
լով , եւ պարակելու զանալով . . . . .

ԳԱՐՈՒՆ

Պաշտոյ մէջ նոր հրատարակուիլ  
սկսած է ԳԱՐՈՒՆ անունով քառա-  
ձալ շարձաթիւթ մը , հին թե՛ փ-  
մի ազդեցութեանց տակ ճշմարտ  
մտադիւր գրական հանգէտի Տնօրէն  
Տիար Յ . Կ . Փալազաշեանի տնօրի-  
նութեամբ եւ շարք մը ծանօթ չը-  
րապարակագիրներու աջակցու-  
թեամբ :

Տիար Փալազաշեան Պաշտոյ հը-  
րապարակին վրայ արդէն ծանօթ եւ  
կարկառուն դէմք մ'է . Հիմնադիր  
Տնօրէնը Փալազաշեան վարժարանին .  
իսկ ԳԱՐՈՒՆի առաջին թիւին բա-  
վանդակութիւնը այժմէն իսկ ցոյց  
կուտայ թէ՛ անկողնակալութեան  
ճշմարիտ ներկայացուցիչներէն մին  
պիտի ըլլայ իր ԳԱՐՈՒՆ ուլը , որ  
զարման սկիզբները ցոյց կուտայ ա-

նոր կողմնաչափ անուշաբոյր ծիւթ-  
րը , խորհրդաւոր շուգադիպու-  
թեամբ մը :

ԳԱՐՈՒՆ իր արդի համարձակ  
ուղղութիւնը անփոփոխ շարունակե-  
լով , տարակոյս չմնար թէ՛ մեծ ա-  
պագայ կը խոստանայ իր փորձ վար-  
չին եւ նոյնչափ վարժ օժանդակնե-  
րուն ձեռքին մէջ , սակայն ասիկա  
պատճառ մը չէ՛ որ մենք այլ անոր  
առաջադրեալ յառաջդիմութեանց եւ  
յարատելութեան համար մեր սրտա-  
բուրիս բարեմաղթութիւնները չի  
զրկենք Տիար Յ . Կ . Փալազաշեանին  
եւ իրեններուն , որ հետզհետէ բազ-  
մապատիկ , ուսումնայ եւ արգելա-  
ւորութի ԳԱՐՈՒՆ ին գարունները , յօ-  
գուտ եւ ի պարձանս հայ ազգին :

Ն . Վ . ՊՈՂՈՍ ԲԱՇՅԱ

Ս . Պատրիարք Հայրը , կը գը-  
րէ « Արեւելք » , նպատից յանձ-  
նած զորովն տրամադրութեան տակ  
գրած է Եղիպտոսի Բարեգործակա-  
նին կողմէ զրկուած 70,000 Թրան-  
զի չէքը , որ ինչպէս յայտնի է ,  
պիտի յատկացուի միմիայն սեր-  
մացու եւ երկրագործական գործիք-  
ներ գնելու Սատունի , Հաճրնի եւ  
Կարնոյ ( Խնուս , Գերջան ) կարօտ  
զիւղայիններուն :

ՄԵՆ ՀԱՆՐԱՎԻՐ

Մեզի լուր կը տրուի թէ՛ շատ  
մը ստորագրութիւններով արդէն  
լեցուած հանրագրութիւն մը հրա-  
պարակ ելած է , որուն զխաւար նը-  
պատակն է պաշտօնէ դադարեցնել եւ  
Առաջնորդարանէն դուրս , դուրս  
արտաքսել Աղանունի Առաջնորդը ,  
Տեղապահ Յարութիւն Գահանան եւ  
Կիսանապետ Նազարէթ Աղազար-  
եանը , որոնք , իբրեւ հին ուժեղ-  
եան թիփեր , ի մէջ շատ մը նկա-  
տելութեամբ , Տ . Տ . Թորոսեանի վը-  
րայ ի գործ գրուած սերտին եւ ա-  
նոր տան մէջ կատարուած ձեռագը-  
րերու գողութեան մասնակցած են .  
Գողցուած այս ձեռագիրներուն մէջ  
կան Ողբացեալ Հոգեւոր Տէր Դեռնդ-

Եպիսկոպոս Երիմանեանի , եւ Իմ Աք-  
տորի կեանքը՝ Երկասիրութեան մէկ  
հատորը , ուրիշ գրուածներ , ձե-  
ռագրեր , եւ կարեւոր թղթեր , մար-  
հակներ եւ արժէքաւոր թղթեր :

Տէր Արեւիկա Երզնկեան օր նոյն-  
պէս մեզուկցած է այս նշանաւոր եւ  
սիւսթեմաթիւք ու պաշտօնական գո-  
ղութեան , պատրաստուած հանրագրի  
արդիւնքին իրենց աննպատակ էլք մը  
ունենալուն վտահ , անկողնոյ կը  
ծառայէ իրեր :

Հանրագիրը երեք օրինակ կը ք-  
տորագրուի եղեր , մին Իզմիրեան  
Վեհափառի , միւսը Պաշտոյ Անդր . Ե-  
րեւի . Ժողովոյ Առնակապետին եւ  
Երրորդը՝ Ն . Վ . Պոլոս բաշայի մա-  
տուցուելու համար :

Ասկէ վերջն է որ կատարա-  
կան շրջանակներու ալ դիմում պի-  
տի ըլլայ :

ՏԵՍՈՒՐ ԺՊԻՏ

ԽԱՐԵԲԱՅ  
ՃՅԱՐՏԱԽՈՍՆԵՐ (!)

« Ճշմարտախօս » մը « Լուսաբեր »  
- Թիւն » ի 630/12 թիւին մէջ գրու-  
թիւն մը հրատակելով փութացեր է  
միտքեր պղտորել « Տխուր Ժպիտ » ա-  
նուն երկասիրութեան գրական ար-  
ժանիքին ու անոր սպառելու եղա-  
նակին նկատմամբ կարգ մ'անխղճ  
յերբերանքներ ընելով , ինչ որ , ոչ  
ուրիշ բանի , այլ սոսկ անձնակնու-  
րէն սնուցուած գոնու կիրքերու  
արդիւնք կրնան ընդունուիլ ամէն  
լրջամիտ շրջանակի մէջ :

Ինչի համար զարմանալի չէ այս  
եւ ոչ ալ դաղանիք մը՝ հանրային  
հարցերով հետաքրքրուող ու է ան-  
հատի մօտ :

Ո՞վ չի խոստովանիր որ , այսօր  
Եգիպտահայ գաղութը բազմաթիւ  
« Ճշմարտախօս » ներ կը սնուցանէ  
իր դմակին մէջ . Ճշմարտախօսներ՝  
որոնք չեմ գիտեր , ներքոն ալիքնե-  
րէն քուելով , խաւարակուած Ափ-  
րէկէի ո՞ր քունջերէն կուզան սեղա-  
ւորիլ այս հովիտին մէջ , ծըլելու ,  
ծաղկելու եւ պտուղ տալու !!! . . . :

« Տխուր Ժպիտ » ը եթէ սնի  
նշանակելի պակաս մը , որ ամէնէն  
առաջ աչքի զարկած է « Ճշմարտա-  
խօս » ի մօտ , այն ալ սա է թէ՛ ա-  
նոր բովանդակութիւնը ընկերային  
բարոյականի շուրջը կը դառնայ եւ լը-  
պիլը ու պոռնկաբարոյ քերթուած-  
ներ չպարունակելու յանցանքը ունի  
Ինչ որ կը տեսնուի հոն՝ վսե-  
մին գաղափարականութիւնն է՝ նը-  
սիրուած Մայր հայրենիքին ու անոր  
հարազատ զուակաց գնահատելի  
արժանիքին , մէկ խօսքով հայրե-  
նիքի ծոցէն խլուած ծաղիկ մ'է  
ան :

Հոն չեն տեսնուիր ցաւապարի ,  
հիւժախաւար ջղազարի մը վերա-  
ցականութիւնները , շոգեկախք ու-  
ղեղի մը անէպման ժամերուն մէջ

ըրած ճանկութեամբու եւ ուժակո-  
ծութեանց նկարագրութիւնները , ո-  
րոնք պիտի վերացնէին կարգացողն  
ու թո՛ւ ճշ պիտի տային !!! անոր  
հոգւոյ խաւարներուն՝ մինչեւ « ան-  
մատչելի կատարն լուսոյ բարձրու-  
թեան . . . » :

Եւ որովհետեւ այսպէս՝ ուրեմն  
տարակոյս չըլլայ որ « Տխուր Ժպիտ »  
« Ճշմարտախօս » գրագէտներու մօտ  
պիտի մնայ « գրական դաւաճանու-  
թիւն » . . . » եւ անոր արժանիքի գը-  
նահատուած « միշտ աղէտ » . . . :

« Ճշմարտախօս » ներն ալ միշտ  
պիտի մնան « անհաս » . . . » ազնիւ  
զգացմանց թելադրութիւնները վի-  
րամէջ « անձնական մեղքի եւ անձ-  
նական մեղքը՝ հանրային ամօթի » :

Եգիպտահայ ճշմարտախօսները  
« վեր-ամէն » ը երկու պարագայի մէջ  
իսկուս լաւ արժեցողութեամբ եւ . . . ա-  
նուղղակի կերպով հանրային կեան-  
քի հետ պատշաճեցուցուած իրենց  
անձնական շաղկեններուն մէջ . . . . .

. . . . . վեր-չ'ածեմ . . . . . սրպէսզի  
. . . . . լաւ վեր-ածեմ . . . . . վեր-  
ածեմ՝ սրպէսզի . . . . . վեր-չ'ածեն . . . . .

Եւ ճիշդ ասոր համար է որ ,  
վեր-ածող ճշմարտախօսներ անխո-  
հեմութիւն չեն ունենար գոնէ ան-  
գամ մը վեր-ածելու մօթ անկիւն-  
ներու մէջ հանրութեան անունով  
տեղի ունեցած ա՛յն խրական աղէտ-  
ները , որոնք ճշմարտախօսներու քը-  
թին տակ եւ նոյն իսկ իրենց յայտնի  
մասնակցութեամբ՝ կը գործուին եւ  
որոյ յայտնութեան համար ամէն  
ժամ եւ ամէն վայրկեան պապակած  
կը մնայ հանրութիւնը :

Անձնական էմբրիօներ յառաջ քը-  
չելու համար , Ազգը պատրուակ  
բռնուելով՝ անոր արդար շահերը  
կը խեղաթիւրուին . . . ու ծնած մեղ-  
քը կը նուիրագործուի , մինչ անդին՝  
« Տխուր Ժպիտ » կը մնայ հանրային  
աղէտ՝ Ազգային կեանքի մէջ :

Այն մարդիկ որ ազգին անու-  
նով ոճիրներ գործեցին , սիրելի ա-  
նուններ շահագործեցին՝ առանց  
նոյն իսկ այդ յաւէտ սիրելի անուանց  
սէրերու պիտութեան , այսօր նոյն  
այդ մարդիկ մարտը ու անարատ՝  
Ազգի աչքի մէջ անկեղծան ու ան-  
դին՝ Hélas ! . . . . . նոյն Ազգի ազ-  
քատաց սիրոյն ծառայող ազնիւ բը-  
գացում մ'ու անկեղծ ձեռնարկ մը  
ընդունուեցաւ անձնական մեղք՝ ու  
վերածուեցաւ հանրային ամօթի . . . . .

եւ այս տրամաբանութիւնը՝ սոսկ  
անոր համար որ ճշմարտախօսները . . .  
« Տխուր Ժպիտ » անակնկալ՝ հրա-  
տարակութեան ու սպառման եղա-  
նակի զուգորդութեամբ փակ-  
ուած ներդրում մը առջեւ կը տես-  
նեն ինքզինքնին , որմէ թերեւս օր  
մը ներս մտնելու կը պատրաստը-  
ին եղեր . . . . . երկար ատենէ ի վեր  
« Ճշմարտախօս » ը եթէ փափա-  
ղէր յարգանաց բաժին մը բերել

Տ Ե Ս Ո Ւ Ր Ժ Պ Ի Տ

Ի Ն Պ Ս Տ Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Ս Ո Վ Ե Լ Ո Յ

« Արշալոյս » ի Տարածանէն լոյս տեսաւ « ՏԵՍՈՒՐ ԺՊԻՏ » անունով գրքոյկ մը մօտ 200 էջերէ բաղկացեալ , մաքուր թղթի վրայ եւ խնամեալ տը-  
պագրութեամբ , 14 Եգիպտահայ կարեւոր դէմքերու գեղատիպ պատկերներով եւ արթնաբի կողքով մը՝ որ Հայաստանի կարօտեալները կը պատկերացնէ .  
Յատուկ Մասնախումբ մը կազմուած է , որուն Գանձապետն է Աղնուաշուք Սեղբաքէֆէնտի Դաւիթեան , որուն պէտք է ուղղել նուէրներն , ի  
Տարբէ Տիգրան Փաշա , իսկ ձեռքէ գնել ուղղները՝ պէտք է դիմեն Պապ-Էլ-Խալք Կուլէնուրայի դիմաց Պէրպէրեան Եղբարց վաճառատունը : 3-4

# ՄԵԾ ՎԱՃԱՌՄՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷԲԷՅԷ



# ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է:

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նստիւնորել մեր վաճառատունը:

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամայաճառ ըլլալու. բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին:

Պարսկական ամենաբարձր թէմպէքի ալ և ալ տեսակները բայց մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնելը պարզապէս սխալի է:

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրատօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են:

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

սիրելի անուններուն, երբէք չպիտի ներէր իրեն տխուր բացատրութիւններ յերկրելու նոյն անուննց շուրջը:

Ու խորհիլ որ այս ճշմարտախօսները այն պնակալէզ որովայնախօսներն են, որոնք երբեմն անձնական նկատումներէ մղուած՝ սիրելի անուններու հասցէին հայհուաներ տեղացնելու չափ չ'իացած էին. . . մինչ այսօր խաչադող քրտնանքներով նոյն սիրելի անուննց յարգելիութիւնը փաստ կը բռնեն՝ ու դարձեալ անձնական կիրքեր յագեցնելու հաշիւներով հրապարակ կ'իջնեն:

Ժողովուրդը այլևս կարելի չէ խաբել, պարոններ. . . .

Ճ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՆԳԻՊՈՑՈՒՄ  
ԳՐԱՆՈՒՄ ԳԱՂ. ԺՈՂՈՎՈՑ  
Ա.ՁԳ. ԳՍԻ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԹԻԻ 805  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Գահիրէի հայոց Առաջնորդադանը այսու կը յայտարարէ թէ Բարաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սեփական և եգիպտոսի ՊէՏէրայի Միտրիթիին Բաֆր Տաւուար Մէրքէզին Սիտի Ղազի գիւղին մէջ, Պէտլաուսի մօտ, 984 Քէտտան 3 գրաթ և 20 սէհիմ գետինը հինգ վայրկեան հեռի է Մասրաֆ նուպարիէ ըսուած կայարանէն, որ կը գտնուի Բաֆր Տաւուարէն Տամանհուր տանող Տէլթա Լայթի երկաթուղոյ վրայ:

Այս գետինը դնել փափաքողը պէտք է որ տեղւոյն պահպան Մուհամմէտ Ապուլլահի առաջնորդութեամբ հողը այցելեն ու քննեն. որով ետքը իրենց օֆրը կրնան ներկայացնել և ստորագրել աճուրդի Դայմէին ներքև և իրենց առաջարկելիք գնոյն 10 առ 0/0ը հնչուն դրամով իբր ապահովութիւն պէտք է յանձնեն Առաջնորդարանին և կամ քաղաքի անուանի պանդաներէն մէկուն մէջ գումարը յանուն Առաջնորդարանին տէֆօ ընեն և ընկալազիրն յանձնեն Առաջնորդարանին:

Յուսկանէս սկեսալ մինչև երբ ամիս, պայմանաժամ սահմանուած է այս օֆրենքը ընդունելու համար:

Այդ ժամանակամիջոցին մէջ գնել փափաքողը վաճառման պայմաններուն կրնան տեղեկանալ կիրակի և տոն օրերէ զատ ամէն օր առաւօտեան ժամը 9-12 և իրիկունը ժամը 3-5, Առաջնորդարանին Դիւանատան մէջ ի ՊէՏէն Էլ Սուրէն Դահիրէի:

Առաջնորդարանս իրեն կը վերապահէ առաջարկելի ո՛ր և է գին (offre) ընդունելու կամ մերժելու իրաւունքը, մերժման պարագային օֆրը ներկայացնողը Առաջնորդարանէ ոչինչ պահանջելու իրաւունք ունի, ի բաց առեալ իր տուած ապահովութեան գումարը, որ իրեն կը վերադառնայ:

Առաջնորդական փոխանորդ Յարութիւն Բահ. Յակոբեան  
12 Դեկտ. 1908

# ՄԵՄՄԱՐ

## ԳԵՈՐԳ ԱՆԱՃԱՃԵԱՆ

Կը հայրայրէ ջուներ, դրամական փոխառութիւններ և կանաւորեալ սենեակներ:

Իր կեդրոնատեղին է Պազար Մուրուրի գրան քովի երկու սրճարանները ամէն օր ժամը 7 էն մինչև 12 կէս օրէն առաջ, և ժամը 2 էն 3ը կէս օրէ յետոյ:

## ԾԱԽՈՒ ԳԻՐՔԻՐ

«Արշալոյս» յոպարանին մէջ, Շէրիֆ բաշայի պարտէզին գիւմաթ կը վաճառուին հետեւեալ պրօշիւրները:

Ա. ՊԱԼԵԱՆ  
ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՏԵՆՈՂԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ  
« 2 Հիւլէն 50 »

Թիւ 3 պրօշիւրը թէև հրաշտիք մը բայց ինչ ինչ նկատումներով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար. գինն է մէկ ֆրանք:

Դիմել Արշալոյսի կոմպոզիթիւնէն զատ Հեղինակին հասցէին օր է:  
Mr. A. Balian  
Le Caire

# ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐՎԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պապաքի փողոց. Խաչնետարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց. Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔՍՂԱԲԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՅԻՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլերն են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վիսյակաւ եւ մեքայներով վարձատրուած, երաշխատեալ մեքենաներ:

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է շնորհակցութիւն ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿՍՍԵՐԱԿԱՆ ԱՅՍԵՐՎԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻԲԻՆ ՀԱՅԹԱՅԻՉ Ն. Բ. ՆՅԻՎԱՅԱՆ ՅԱՆ

Կեդերէն զոչւանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլեր յաւկանջիմ



Չրի դասեր և նորոգութիւններ, Սինկլեր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ:

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

Գին ՉԱՓԱՆՈՐ

# ՕԹԷԼ ՏՐԱՊԻԶՈՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒ

Բանթօ, Սուգուլ Մանկաի

3 Թէթիէթ-Էլ-Քալաանի փողոց 3

Մանկաի Մզկիթին դէմը, Թիւ 3.

Պանդոկապետ - Մ. Գէորգեան

Կը յանձնարարուի արդոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օդաւէտ դիրքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն:

Դիմեցէք անգամ մը՝ և գոհ պիտի մնաք:

Դիմելը չափաւոր են:

28-55

ԿԱՐԵԻՐՈՐ ԱԶԻ

Գաւառներու համար Գործակալներու պէտք կայ զիմել իրերի խմբագրութեան հասցէին:

# ՍԱՐԳԻՍ Յ. ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, փօսկրափներու և կագի վառարաններու:

Տասներկու տարին «Սինկլեր» ընկերութեան քով մեքենայարդարութեան գրադիէ յետոյ, այժմ զինովստճառ Չախարիա Գոնտատիթիւնի քով պաշտօնեայ է գնչքերու և մեքենայարդարման ճիւղին մէջ:

Կարգ մը քարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագայ ժամերը պիտի տրամադրէ կարի մեքենաներու, ֆօնօկրափներու, կոզի վառարաններու, նորոգութեանց եւ յարգտրման:

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափուելու կրնան դիմել իր տունը Շարէ Մուհամմէտ Ալի Թահթէլ Ռապէհ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, և դարձեալ դիւրութեան համար քարթ բոստալով մը կրնան դիմել «Արշալոյսի» Տպարանին. նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը և Տաւանի թիւը:

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ:

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ:

19-50